© Հ. Ադամյան

Սոցիալական պատմություն **«ԻՆՉՊԵՍ ԼԻՆԵԼ ԼԱՎ ԸՆԿԵՐ»**	
	Ես սիրում եմ ընկերություն անել: Լավ ընկեր լինելը կարող է շատ հեշտ լինել:
	Լավ ընկեր լինել՝ նշանակում է օգտագործել բարի խոսքեր, որոնք հնչում են մեղմ ձայնով:
	Ես կիսվում եմ իմ խաղալիքներով ընկերներիս հետ: Երբ ուզում եմ խաղալ ընկերոջս խաղալիքով, խնդրում եմ այն նրանից՝ նախքան վերցնելը:
	Երբ ցանկանում եմ խաղալ ընկերոջս հետ, ես պետք է հարցնեմ նրան. «Ուզու՞մ ես խաղալ ինձ հետ»:

© Հ. Ադամյան

	Երբ ընկերս խաղում է իր մեկ այլ ընկերոջ հետ, դա խնդիր չէ: Մենք բոլորս շատ ընկերներ ունենք և խաղալու համար կարող ենք ընտրել նրանցից յուրաքանչյուրին:
	Եթե ընկերներիցս մեկը, ում հետ ես ուզում եմ խաղալ, խաղում է մեկ ուրիշի հետ, ես կարող եմ խնդրել և միանալ նրանց խաղին կամ՝ կարող եմ գտնել մեկ այլ ընկերոջ, ում հետ կարող եմ խաղալ:
	Ընկերներ ունենալը հիանալի է: Ես կարող եմ խաղալ իմ բոլոր ընկերների հետ և օգտագործել իմ բարի բառերն ու մեղմ ձայնը: